

ԳՊՀ Տնտեսագիտական ֆակուլտետի 2012 թվականի հոկտեմբերի 6-ի խորհրդի նիստի

Օրակարգ՝

1. Կրթության որակի բարձրացման մեխանիզմների ներկայացում
2. Լուծարային շրջանի ընթացքը ֆակուլտետում
3. Առաջին միջանկյալ քննությունների կազմակերպումը
4. Տնտեսագիտական ֆակուլտետի 2012-2013 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի քննարկում

Նիստին մասնակցում էին խորհրդի 16 անդամներ

1. Լսեցին Կրթության որակի բարձրացման մեխանիզմների ներկայացման մասին /Ջեկուցող՝ Ս. Ամիրխանյան/

Ներկայացվեց դեկանատի և ամբիոնների կողմից համատեղ մշակված կրթության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների պլանը, որտեղ հանգամանորեն նշված են կրթության որակը բարձրացնող մեխանիզմներ, որոնց կիրառումը կտա դրական արդյունք:

Արտահայտվեցին Մ. Հերզնյանը, Հ. Զաքոյանը, Հ. Ղուլոյանը, Վ. Կարապետյանը, Վ. Առաքելյանը, Ն. Թադևոսյանը, Ս. Ամիրխանյանը

Որոշեցին Հավանություն տալ կրթության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումներին և ներկայացնել ԳՊՀ գիտական խորհրդին:

2. Լսեցին Լուծարային շրջանի ընթացքը ֆակուլտետում /Ջեկ. Ս. Ամիրխանյան, Մ. Հերզնյան/

Ներկայացվեց առարկայական պարտքերի հանձման ընթացքը, նշվեց ցածր առաջադիմությամբ ուսանողների հետ տարվող աշխատանքների մասին:

Արտահայտվեցին Մ. Հերզնյանը, Հ. Զաքոյանը, Հ. Ղուլոյանը, Վ. Կարապետյանը, Ն. Թադևոսյանը, Ս. Ամիրխանյանը

Որոշեցին Հետևել առարկայական պարտքեր ունեցող ուսանողների առաջադիմությանը, զգուշացնել ժամանակին առարկայական պարտքերը հանձնելու, հակառակ դեպքում համալսարանից հեռացման վտանգի մասին:

3. Լսեցին Առաջին միջանկյալ քննությունների կազմակերպման մասին /Ձեկուցողներ՝ Ս. Ամիրխանյան, Ս. Հերզնյան/

Ներկայացվեց առաջին միջանկյալ քննությունների ընթացքը և արդյունքները:

Արտահայտվեցին Ս. Հերզնյանը, Հ. Զաքոյանը, Հ. Ղուլոյանը, Ս. Ամիրխանյանը

Որոշեցին.

1. հանձնարարել ամբիոններին՝ հետևողականություն հանդես բերել միջանկյալ քննությունների ընթացքի նկատմամբ,
2. կանոնակարգի համաձայն միջանկյալ քննության արդյունքները ժամանակին ներկայացնել ուսանողներին:

4. Լսեցին Տնտեսագիտական ֆակուլտետի 2012-2013 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգի մասին հարցը /Ձեկուցող՝ Ս. Ամիրխանյան/

Ս. Ամիրխանյանը ներկայացրեց ֆակուլտետի զարգացման հայեցակարգի նախագիծը:

Արտահայտվեցին Հ. Զաքոյանը, Հ. Ղուլոյանը, Ս. Հերզնյանը, Գ. Խաչատրյանը, Ս. Բագոյանը,

Դ. Մովսեսյանը, Ս. Ամիրխանյանը:

Որոշեցին

1. Հաստատել ֆակուլտետի զարգացման հայեցակարգը:
2. ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2012-2013 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը ներկայացնել ԳՊՀ գիտական խորհրդին:

Խորհրդի նախագահ՝

Ս. Ամիրխանյան

Քարտուղար՝

Ն. Խանդանյան